

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ БОГОСЛОВИЯ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF THEOLOGY

ՏԱՐԵԳԻՐՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԺԱ

ЕЖЕГОДНИК

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

ТОМ XI

YEARBOOK

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

VOLUME XI

ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
ЕРЕВАН - 2016

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2016

YSU PRESS
YEREVAN - 2016

ՍԱՀՄՈՍԱՎԱՆ-ՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Աշոք Մանուչարյան

Ըստ ավանդության՝ հայոց միջնադարյան նշանավոր վանքերից մեկի՝ Սաղմոսավանքի հիմնադիրը համարվում է Ս. Գրիգոր Լուսավորիչը (239-325/6):

Նա ոչ միայն լուսավորեց Հայաստանը քրիստոնեական հավատով, այլև զարդարեց հոգևոր և աստվածահաճո կանոններով ու բարեզարդ վարքերով, կառուցեց եկեղեցիներ, կարգեց քահանաներ ու սպասավորներ¹:

Կյանքի վերջին շրջանում Գրիգոր Լուսավորիչը կաթողիկոսական աթոռը հանձնում է իր կրտսեր որդի Արիստակեսին, իսկ ինքը հեռանում Արագած լեռը՝ ճգնության: Նա ամռանը ճգնում էր Արագածի գագաթին, որտեղ կառուցեց մի փոքրիկ եկեղեցի Ս. Երրորդություն անունով և այնտեղ կախ տվեց մի աներևույթ կանթեղ՝ առանց պարանի, այն լցրեց իր արտասուքով ու խնդրեց Աստծուն, որպեսզի երկնային լույսով վառելով՝ անշեջ մնա մինչև աշխարհի վախճանը²:

Ձմռանը Գրիգոր Լուսավորիչն իջնում էր այդ լեռան ստորոտը, Քասախ գետի ձորը և այնտեղ էր կատարում իր աստվածային ծառայությունը: Նա երբեմն մնում էր ձորում և երբեմն կիրճի վերևի բարձրահայաց տեղում, որի համար էլ երկու տեղերում էլ կառուցեց փոքրիկ եկեղեցիներ, այնտեղ հավաքեց միաբաններ: Վերևի անունը դրեց Սաղմոսաց մենաստան, որպեսզի մշտապես սաղմոսերգություն կատարեին³: Այն, ըստ Սաղմոսավանքի կոնդակի, դարձրեց նաև եպիսկոպոսանիստ աթոռ Նիգ գավառի համար⁴ (ներկայիս Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջան): Հայոց Արշակունյաց թագավորության անկումից հետո (428 թ.), պարսկական մարզպանության (428-637) և արաբական արշավանքների ու տիրապետության օրոք (640-874/885) կարծես մարեց

¹ Տե՛ս , Ջամբո, Երևան, 2003, էջ 402:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 8061:

Սաղմոսաց մենաստանի փառքը Արագածոտնում առավել հայտնի դարձած Օշականի, Արուճի, Թալինի եկեղեցիների համեմատ: Հայոց Բագրատունյաց թագավորության օրոք (874/85-1045) Նիգ գավառը ներառվեց 1026 թ. հիմնադրված Ամբերդի եպիսկոպոսության մեջ:

Հայաստանում սելջուկյան տիրապետության ժամանակ (1064-1211) Սաղմոսաց մենաստանի միաբանների գործունեությունն առավել կենտրոնանում է Քասախ գետի կիրճում գտնվող երկհարկ քարանձավային համալիրում: Այստեղ XII դ. կեսերին հիմնվում է Սաղմոսավանքի քարանձավի անապատը, որի միաբանները ոչ միայն ձեռագրեր են արտագրում, այլև իրենց գործունեությամբ նպաստում Չաքարյան բանակների հաղթական առաջընթացին:

Այրարատ նահանգի Նիգ, Ամբերդ, Արագածոտն գավառները սելջուկ-թուրքական տիրապետությունից ազատագրելուց հետո (1191-1196) հայոց և վրաց ամիրսպասալար (գլխավոր զորահրամանատար) Չաքարե Չաքարյանը (1187-1211/12) դրանք շնորհում է ռազմական գործողություններում աչքի ընկած իր զորապետ Վաչե Վաչուտյանին՝ նշանակելով նրան նաև Այրարատյան նահանգի (Կենտրոնական Հայաստանի) կողմնապետ (կառավարիչ): Վաչե Վաչուտյան իշխանաց իշխանը և նրա բարեպաշտ կին Մամախաթուն իշխանուհին ձեռնամուխ են լինում բազմաթիվ եկեղեցիների կառուցմանը (Թեղենիսի, Եղիպատրուշի, Տեղերի, Հովհաննավանքի, Ուշիի և այլնի): Դրանք հիմնականում, ինչպես Չաքարե ամիրսպասալարի խորհրդական ու խոստովանահայր, նշանավոր գիտնական Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» համապատասխան օրենքն էր պահանջում, կառուցվում էին պատմական ավերված եկեղեցիների վայրերում: Երբեմն վերանորոգում էին այդ սրբարանները և հարևանությամբ կառուցվում ավելի մեծ, ճոխ ու շքեղ եկեղեցիներ:

1215 թ. Վաչե Վաչուտյանը կառուցում է Սաղմոսավանքի **Ս. Սիոն եկեղեցին**: Կարծում ենք, որ եկեղեցու անունը պատահական չի ընտրված. սրբազան քաղաք Երուսաղեմի ամենաբարձր բլրակը կոչվում է Սիոն¹, իսկ Քասախի կիրճի սաղմոսավանյան ձորափը ամենախոր հատվածն է (բարձրությունը մոտավորապես 200 մ): Հրեից Դավիթ թագավորը (Ք.ա. ≈ 990-950) շատ է սիրել Երուսաղեմի Սիոն լեռն իր գեղեցկու-

¹ Տե՛ս «Աստվածաշնչի բառարան», Մոսկվա-Երևան, 1992, էջ 506:

թյան և ամրության համար¹: Չի բացառվում, որ Դավիթ արքան իր սաղմոսների մի մասը հորինած լինի առինքնող Սիոն լեռան վրա գրոսնելիս:

Ահա, կարծում ենք, այս հանգամանքները հաշվի առնելով է Վաչե Վաչուտյան մեծ իշխանն իր նորակառույց եկեղեցին կոչել Ս. Սիոն: Եկեղեցու շենքը գմբեթավոր մի կառույց է, որի հատակագիծը դրսից քառանկյունի է, իսկ ներսից շնորհիվ անկյուններում տեղավորված խորանների, դարձել է խաչաձև՝ ուղղանկյուն խաչաթևերով²: Հայկական ճարտարապետության ռուս խորհրդային ուսումնասիրող Անատոլի Յակոբսոնի գնահատմամբ միասնական ներքին տարածությամբ այդ տիպի խաչագմբեթ հորինվածքը ձևավորվել է դեռևս X դարում³: Հայ ճարտարապետներ Գ. Գևորգյանի, Մ. Հասրաթյանի, Ա. Հախնազարյանի պարզաբանմամբ. «Միասնական ներքին տարածություն ունեցող եկեղեցական շենքի այս յորինուածքը 12-13-րդ դդ. ամենատարածուածն էր Հայաստանի եկեղեցական ճարտարապետութեան մէջ»⁴: Եկեղեցու չորս անկյուններում տեղավորված են չորս երկհարկ ավանդատները և դրանց դեպի ներս առաջացող պատերով կազմված ներքին խաչաթևի վրա էլ բարձրանում է գմբեթը:

1241 թ., ինչպես գավթի հյուսիսային պատուհանի հարավային կողմի՝ մեր վերածանությամբ եղծված արձանագրությունն է փաստում, Վաչեի որդի Քուրդ Ա Վաչուտյանը Ս. Սիոն եկեղեցին զարդարել է ոսկի խաչով: Այն մենք հասկանում ենք, որ գմբեթի գագաթին տեղադրվել է ոսկե խաչ: Համեմատության կարգով նշենք որ, Անի մայրաքաղաքի Մայր տաճարի գլխին հայոց Կատրանիդե Բ Բագրատունի թագուհին 1001 թ. դրել է մարդաչափ արձաթե խաչ, ինչպես իրազեկվում ենք հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցու (XI-XII դդ.) տեղեկությունից⁵:

Անիի Մայր տաճարը Բագրատունյաց թագավորության փառքի խորհրդանիշն է:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս Հ. Եղիազարյան, Սաղմոսավանք, «Էջմիածին», 1961, № 6, էջ 38:

³ Տե՛ս Ա. Յակոբսոն, Սաղմոսավանք, Երևան, 1984, էջ 6:

⁴ Գ. Գևորգյան, Մ. Հասրաթյան, Ա. Հախնազարյան, Սաղմոսավանք, Երևան, 2001, էջ 10:

⁵ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, գրաբար բնագիրը Մ. Մելիք-Ադամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխ. թարգմ. և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 162-163:

Քուրդ Ա Վաչուտյանը, ինչպես ինքն է ասում Հովհաննավանքի 1250 թ. և Սաղմոսավանքի՝ մեր կողմից վերծանված նորահայտ 1255 թ. արձանագրություններում, հաճելի է եղել այլազգի աշխարհակալ զորացն նետողաց և իր նպաստը բերել եկեղեցաշինությանը¹: 1236 թ. Հայաստանը նվաճած մոնղոլների կողմից Քուրդ իշխանն այնքան էր մեծարվել, բարձրացել ու հայտնի դարձել, որ Մոնղոլիայի դաշնակից Կիլիկիայի հայոց Հեթում Ա թագավորը (1226-1270) 1254 թ. հեռավոր Կարակորում՝ Մանգու մեծ խանի (1251-1259) մոտ ուղևորվելու ճանապարհին Այրարատում կանգ առավ ոչ թե Անիի տիրակալներ՝ հայոց ամիրսպասալարներ, հայր ու որդի Շահնշահ Ա (1212-1261), Զաքարե Բ (1250-1261) Զաքարյանների մոտ, այլ հյուրընկալվեց Քուրդ Վաչուտյանի ապարանքում՝ Վարդենիս պատմական գյուղում:

Հայոց եկեղեցին ոսկե խաչով զարդարելու իրողության ներքո կար նաև սքողված քաղաքական նկատառում. մոնղոլական նորահաստատ տիրապետությունը քրիստոնյա Հայաստանի համար իբր այնքան ապահով է, որ հայերը կարող են իրենց պաշտամունքային սրբարանները զարդարել անգամ թանկարժեք, ոսկյա խաչերով:

Վաչե Վաչուտյանը, ավարտելով Ս. Սիոնի շինարարությունը, նույն 1215 թ. նորակառույց եկեղեցուն նվիրաբերում է 115 ձեռագիր մատյան, մի մասը գրված մագաղաթի, մյուսը՝ թղթի վրա:

Այդ մասին մենք իմանում ենք Վաչե Վաչուտյանի կազմած ձեռագրերի ցուցակից, որը 1912 թ. մայիսի 29-ին պատահաբար հայտնաբերվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբան, հնագետ Խաչիկ վրդ. Դադյանը Սաղմոսավանքի ձորի քարանձավներից մեկում՝ որոնումներ կատարելիս²:

1215-1220-ական թթ. Վաչե Վաչուտյանը Ս. Սիոն եկեղեցին արևմուտքից կառուցում է **գավիթը**: Ա. Յակոբսոնի դիտարկմամբ. «Գավիթն ունի Հայաստանում այդ ժամանակ տարածված և բնորոշ քառակուսի մեծ դահլիճի (ներքին չափերը 13x13.5 մ) հորինվածք՝ միմյանցից հեռու

¹ Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 103, Մեր դաշտային օրագրից: Մոնղոլները հայկական վիճակի աղբյուրներում կոչվում են նաև «նետողաց ազգ»՝ նկատի ունենալով նրանց կռվելը նետ ու աղեղով, որ վաղուց գործածությունից դուրս էր եկել Առաջավոր Ասիայում:

² Տե՛ս **Խաչիկ Ժ. Վարդապետ**, Նորագիտ մագաղաթեայ նօտրագիր ցուցակ Սաղմոսավանքի մատենադարանի, «Շողակաթ», Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք 1-ին, Վաղարշապատ, 1913, էջ 169:

տեղադրված կլոր սյուներով: Դրանք գավթի տարածությունը բաժանում են 9 մասերի, որոնցից կենտրոնականը (քառակուսին) տարածվում է կենտրոնում, երդիկ ունեցող 12 նիստանի հատած կոնով, որի վրա տեղադրված է ռոտոնդան»¹:

Ճարտարապետը գավթում ցուցադրել է դեկորատիվ հնարանքների իր ողջ զինանոցը, ինչպես ասում է Ա. Յակոբսոնը, շարունակելով, որ «Այդ զարդաքանդակների հիմնական առանձնահատկությունը միանման ճարտարապետական տարրերի մշակման դեկորատիվ մոտիվների բազմազանությունն է: Ճարտարապետը խուսափում է ինտերյերի բոլոր ինը մասերի համար թաղի նույն ձևից կամ դրանց միանման մշակումից»²: Գ. Գևոնյանի, Մ. Հասրաթյանի, Ա. Հախնազարյանի նկարագրությամբ. «Գմբեթածածկի նիստերին քանդակուած են քառաթերթ վարդեակներ, իսկ տասներկուերորդին՝ արեւելեանին, ճոխ զարդանախշերով խաչաքանդակ է փորագրուած... Ընդհանրապէս շէնքի ներսի գեղարուեստական ձեւաւորումը փաստօրէն իրականացուել է առաստաղի հատուածների իրօրինակ, չկրկնուող լուծումների միջոցով:

Միանման տարրերի մշակման ձեւերի բազմազանութիւնը Սաղմոսավանքի գաւթի ճարտարապետութեան աչքի ընկնող առանձնահատկութիւնն է: Այսպէս, օրինակ. առաստաղի արեւելեան, հիւսիսարեւելեան եւ հարաւարեւմտեան հատուածները ծածկուած են հայելային թաղերով (գլանածեւ թաղի կենտրոնական մասում հարթ սալեր են տեղադրուած, հիւսիսայինը եւ հարաւայինը փոքր տրոմպների զուգակցումով: Չբաւարարուելով ձեւերի այս բազմազանութեամբ՝ ճարտարապետը միանման ձեւ ունեցող ծածկերը զարդարել է տարբեր քանդակներով եւ նոյնիսկ գունաւորումով: Հայելային թաղերն ունեն բազմագոյն քարերից խճանկարի սկզբունքով հաւաքուած հնգաթեւ եւ ութաթեւ աստղեր ու վարդեակներ, ծածկերից մի քանիսն էլ քանդակների կամ ձեւաւոր շարուածքի փոխարէն ունեն տարբեր գոյներով (դեղին, կարմիր, սպիտակ) կատարուած զարդաձեւեր»³:

Գավթի որմնասյուների խոյակներից վեր քանդակված են գեղաքանդակ խաչքարեր՝ որդան կարմիրով ներկված: Առհասարակ, Սաղմոսավանքի բարձրարվեստ խաչքարերի զգալի մասը ներկված է հայկական

¹ Ա. Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 6:

² Նույն տեղում, էջ 7:

³ Գ. Գևոնյան, Մ. Հասրաթյան, Ա. Հախնազարյան, նշվ. աշխ., էջ 11-12:

կարմիր ներկով: Կարմիր գույնը խորհրդանշում է խաչի վրա հեղված Հիսուս Բրիստոսի փրկչական արյունը:

Գավիթը կառուցել է ճարտարապետ Մխիթարիչ Օշականցին, ինչը մեզ հուշում է նրա անվան համառոտագրված փորագրությունը գավթի կամարներից մեկի վրա: Մինչ այդ նա կառուցել է Եղիպատրուշի Ս. Աստվածածին եկեղեցին ու գավիթը¹:

Ուրույն ճարտարապետական լուծում ունի գավթի գլխավոր շքամուտքը, որը արևմուտքից է: Այն ըստ Գ. Գևոնյանի, Մ. Հասրաթյանի, Ա. Հախնազարյանի՝ «այդ դարի վանքերում ամենախոշորը եւ բարձրն է»²:

Շքամուտքն ունի յուրօրինակ ճարտարապետական հորինվածք: Այն բաղկացած է երեք մասից. ուղղանկյունաձև մուտք՝ ներառված հայկական ոճի կամարակապ խորշում, ինչն ըստ հայ ճարտարապետների «13-րդ դարի շքամուտքերի ամենաբնորոշ ձեւն է»³: Երկրորդ բաղկացուցիչ մասը դա կամարակապ մուտքից բարձր խորշն է՝ քանդակված սլաքաձև կամարով, որը բնորոշ է իսլամական ճարտարապետությանը: Այս երկրորդը, ինչպես նկատել են Սաղմոսավանքն ուսումնասիրած ճարտարապետները, չկա մյուս նմանատիպ հուշարձաններում⁴: Երևույթը կշարունակել մնալ առեղծված, եթե մեր կողմից չվերծանվեր տանիքից ցած փորագրված 1670 թ. ընդարձակ արձանագրությունը: Այն Սաղմոսավանքի ամբողջ համալիրի (Ս. Սիոն եկեղեցի, Ս. Աստվածածին եկեղեցի-գրատուն, գավիթ) հիմնարար նորոգության մասին է, որ ձեռնամուխ է եղել վանքի առաջնորդ Գաբրիել Կարբեցի վարդապետը XVII դարում: Այդ վերանորոգման աշխատանքներին բացի հայ մեկենասներից, իրենց նպաստն են բերել նաև գավառի պարսիկ մուսուլման իշխանավորները: Եվ ահա, նրանց ի երախտագիտություն հաճոյանալու համար, Գաբրիել վարդապետը մտածել է իսլամական ճարտարապետության այդ տարրի հավերժացումը հայոց հավատքի տաճարին: Այսպիսով, երկրորդ կամարի սլաքաձև ավարտը XVII դարի ձևափոխում է:

Շքամուտքի երրորդ բաղադրիչ մասը երկու կամարակապ խորշերն ընդգրկող ուղղանկյուն շրջանակն է: Այդ երեքը խորհրդանշում են Սուրբ

¹ Տե՛ս **Տ. Պետրոսյանց**, Վաչուտյաններ, Երևան, 2001, էջ 171-172:

² **Գ. Գևոնյան, Մ. Հասրաթյան, Ա. Հախնազարյան**, նշվ. աշխ., էջ 12:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

Երրորդությունը: Ուղղանկյան վերևի կենտրոնում ագուցված է գեղաքանդակ խաչքար, որը Սաղմոսավանքն ուսումնասիրած ճարտարապետների բնութագրմամբ դարձել է շքամուտքի «ողջ յօրինուածքի բաղկացուցիչ մասը»¹: Այն կարծես թագ լինի, որը խորհրդանշում է Սուրբ Երրորդության երկնային հավիտենական թագավորությունը:

Վաչե Ա Վաչուտյանը ոչ միայն կառուցել է Սաղմոսավանքի Ս. Սիոն եկեղեցին, գավիթը, այլև հիմնովին վերակառուցել IV դ. Գրիգոր Լուսավորչի հիմնադրած Սաղմոսի փոքրիկ տաճարը: Այն մեր դիտարկմամբ Ս. Սիոն եկեղեցուն հարավից կից փոքրիկ միանավ **մատուռն** է, որի շքամուտքը հարդարված է Գողգոթա-զիկկուրատի նշանի յուրահատուկ քանդակով, իսկ դռնից վերև՝ ուշ միջնադարում արված Ս. Գրիգոր Լուսավորչի որմնանկարն է: Վաչեն միաժամանակ **Ա**-ածն պարսպապատել է վանքի տարածքը: Այսօր այդ պարսպից առանձին հատվածներ են պահպանվել հյուսիսային և արևմտյան մասերում:

Սաղմոսավանքում Վաչե Վաչուտյանի հիմնադրած մատենադարանի ժամանակ առ ժամանակ հարստացող հավաքածուն, նրա ուսումնասիրությունն ու հանրամատչելի դարձնելը, նոր ձեռագրերի ընդօրինակություններն առաջ բերեցին գրադարանի հատուկ շինություն ունենալու պահանջը: Այդ նպատակով Վաչեի որդի Քուրդ Ա Վաչուտյանն իր տիկնոջ՝ Խորիշահ Մամիկոնյան իշխանուհու հետ 1255 թ. իրենց վաղամեռիկ դուստր Մամխաթունի հիշատակի համար կառուցեցին Սաղմոսավանքի **Ս. Աստվածածին եկեղեցի-գրատունը**: Այն, ըստ ճարտարապետներ Գ. Գևոնյանի, Մ. Հասրաթյանի, Ա. Հախնազարյանի, ունի բարդ հատակագիծ և կառուցվել է արդեն կանգուն երեք շենքերի՝ Ս. Սիոն եկեղեցուն, գավթին ու միանավ բազիլիկ մատուռին կից, ունի անկյունաձև հատակագիծ²: Այն իր մեջ ներառել է նաև Ս. Գրիգոր Լուսավորչի միանավ բազիլիկ մատուռի նախասրահը:

Սաղմոսավանքի գրատունը Հայաստանի մյուս հինգ նման շինություններից տարբերվում է նրանով, որ արևելյան կողմում ունի խորան: Ճարտարապետ Ստ. Մնացականյանի դիտարկմամբ. «Այս կառուցվածքը միավորել է գրադարանի և եկեղեցու ֆունկցիաները»³:

¹ Նույն տեղում, էջ 13:

² Տե՛ս Գ. Գևոնյան, Մ. Հասրաթյան, Ա. Հախնազարյան, նշվ. աշխ., էջ 14-15:

³ Ստ. Մնացականյան, Երևանը և նրա շրջակայքը, Երևան, 1971, էջ 179:

Նրա հարավային կողմում երկհարկ ավանդատունն է, որի երկրորդ հարկը, ինչպես նաև խորանի արտաքին հյուսիսային պատի վերնամասը ծառայել են որպես ձեռագրերի և թանկարժեք մետաղից պատրաստված եկեղեցական իրերի թաքստոցներ:

Ա. Յակոբսոնի նկարագրությամբ ու գնահատմամբ. «Սաղմոսավանքի Աստվածածին եկեղեցին, ճարտարապետական առումով, գմբեթը կրող երկու զույգ խաչաձև կամարներով անսյուն հորինվածքի մի յուրօրինակ տարբերակ է: Խաչաձևվող կամարների տեսք ունեցող ծածկով անսյուն հորինվածքը հայ ճարտարապետության բացառիկ նվաճումն էր, որին անձանոթ էին հարևան երկրներում: Այս համարձակ կառուցվածքը ոչ միայն թույլ էր տալիս ծածկել մեծ տարածություն առանց միջանկյալ հենարանների, այլև իր մեջ պարունակում էր մի մեծ գեղարվեստական ուժ, որը ներս մտնողին ապշեցնում էր կամարների անսպասելի և հիասքանչ թռիչքով»¹: Իրենից յուրահատուկ հետաքրքրություն է ներկայացնում նաև Ս. Աստվածածնի գմբեթ-ռոտոնդայի տեղադրությունը: Ա. Յակոբսոնի բնութագրմամբ. «Գմբեթը գետեղված է ոչ թե կենտրոնում, այլ վերջինից զգալի չափով դեպի արևմուտք: Առկա է մի անհամաչափ դասավորություն, որն ասես նսեմացնում է շենքի ներքին տարածությունից դուրս խիստ ցածրադիր և խոր արսիդի շնորհիվ: Ներս մտնողին թվում է, թե գմբեթը գրեթե կենտրոնում է»²:

Այս և վանական համալիրի մյուս անհամաչափությունները (շինությունների ճակատների պատուհանների բացվածքային դասավորությունը, մեծ գմբեթի և երկու ռոտոնդաների զուգորդությունը. որ խորհրդանշում են Սուրբ Երրորդությունը) Ա. Յակոբսոնի համոզմամբ. «Սաղմոսավանքի ողջ ճարտարապետությանը բնորոշ որոշակի գեղագիտական հնարանք է: Այն դրսևորվում է համալիրի ողջ հորինվածքում... Այդ անհամաչափության մեջ չի կարելի չտեսնել Հայաստանում XII-XIII դդ. ձևավորված նոր ճարտարապետական ոճի արտահայտություններից, որը պայմանականորեն կարելի է անվանել գեղապատկեր»³:

¹ Ա.Յակոբսոն, նշվ. աշխ., էջ 9:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 10:

Գրատունը բացի ներքին գունազարդումից, աչքի է ընկնում բազմազան զարդաքանդակներով ու պատկերաքանդակներով. քառաժապավեն հյուսկեն քանդակ, շախմատաձև դասավորված հյուսկեն խաչեր:

Որմնասյուների խոյակներին քանդակված են հավերժության նշաններ (սեգներյան անիվ), կեռ խաչի նշան՝ ներկված կարմիր ու սպիտակ գույնի ներկով (խորհրդանշում է փրկչական հեղված արյամբ հավիտենական կյանք):

Գրատան հյուսիսային մույթից արևելյան պատին անցնող կամարի գագաթի վրա տեղադրված է սիրամարգի ուռուցիկ քանդակը: Ըստ հնագետ Բ. Առաքելյանի՝ սիրամարգը դրախտային անփտության սիմվոլն է¹:

Հատկապես ուշադրության արժանի են «խորանի առաջամասի թաղին արծվի և հրեշտակի քանդակները», որոնք հուշարձանախումբն ուսումնասիրած հայ ճարտարապետների կարծիքով «հաւանաբար Յովհաննէս և Մատթէոս առաքյալների խորհրդանիշներն են»²:

Հրեշտակը պատկերված է վեցաթև, ընդ որում չորս թևերը թռչնի են, երկուսը՝ մարդու: Քանդակագործը շատ խոր իմաստ է դրել այդ բարձրաքանդակում. քառաթև հրեշտակը՝ քերովբեն, Աստծու գահի պահապանն է: Նա իր չորս թևերով ծածկում է դեմքն ու մարմինը, որպեսզի չայրվի Աստծու գերիզոր լույսից: Քերովբեի պատկերաքանդակը նշանակում է սրբարանի երկնային պահպանություն: Վեցաթև հրեշտակը՝ սերովբեն, մարդու և Աստծու միջև կապի ապահովողն է: Նրա չորս թևերը Աստծու լույսից դեմքի ու մարմնի չայրվելն ապահովելն է, իսկ երկուսը՝ սավառնելու համար է:

Ըստ Բ. Առաքելյանի՝ «Արծվի պատկերը մենք ունեցել ենք դեռ Արշակունիների ժամանակ որպես դրոշակ: Արծիվը տոտեմական նշանակություն է ունեցել հայերի մոտ հնագույն ժամանակներում: Արծիվը հարության և ուժի սիմվոլն է համարվել»³: Արծիվը կարող է համարվել նաև երկնային թագավորության խորհրդանիշ:

Պատկերաքանդակներով հարուստ է հատկապես արևմտյան ճակատը, որին առանձնահատուկ շուք են հաղորդում նաև բարձրավեստ ագուցովի խաչքարերը: Այստեղ պատուհանի խաչաձև տարածությունում

¹ Տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում, Երևան, 1949, էջ 93 (հայերեն լեզվով):

² Գ. Գևորգյան, Մ. Հասրաթյան, Ա. Հախնազարյան, նշվ. աշխ., էջ 15:

³ Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 93:

պատկերված են սեգնեթյան անիվ, սիրամարգ, առյուծ (եղել է Բագրատունիների զինանշանը)¹: Բ. Առաքելյանը կենդանիների, թռչունների պատկերները կապում է միջակայք, կոսմոգոնիական հասկացությունների, համաստեղությունների, կենդանակերպերի, նաև տոտեմական նշանակության հետ²: Առյուծը աստվածաստեղծ լույսի ու ջերմության աղբյուրի՝ արևի խորհրդանիշն է: Ըստ Հ. Պետրոսյանի՝ առյուծը խորհրդանշում է Քրիստոսին³:

Հարավային պատի գեղեցկաքանդակ կամարներով ու կիսասյուներով երիզված զույգ պատուհաններից վերև՝ բարավորին քանդակված է սրբապատկերով մարդ: Դրանից վերև գլխիվայր համառոտագրված է **Մկրտիչ վարդապետ**: Գրատան որմնասյուներին փորագրված են գեղագիր «Մ» տառեր: Դրանք նման չեն գավթի ճարտարապետ Մխիթարիչի համառոտագրված անվան «Մ» տառին: Ենթադրելի է, որ թե՛ գրատան կառուցողը, թե՛ պատկերաքանդակների հեղինակը Մկրտիչ վարդապետն է:

Գրատան ներսում՝ խորանի պատերին, պահպանվել են մասամբ ջնջված որմնանկարներ՝ Գաբրիել հրեշտակապետի, դեմ հանդիման՝ Ս. Մարիամ Աստվածածնի (խորհրդանշում են Ավետումը): Գրատան հարավարևելյան մասում քանդակված է ութթևանի ճառագայթավոր գեղաքանդակ աստղ՝ գնդաձև կենտրոնով: Այն, Սաղմոսավանքի ներկայիս հոգևոր հովիվ տեր Օշին քահանա Հայրապետյանի ասելով, խորհրդանշում է արևելքի մոգերին երևացած այն աստղը, որը նրանց առաջնորդեց՝ երկրպագելու նորածին Մանկանը (Մատթ. 2.2-11):

Գրատան կառուցմամբ ու ձեռագրերի հարուստ հավաքածուով փաստորեն Սաղմոսավանքն ունեցավ անհրաժեշտ բոլոր պայմանները՝ տեղում բարձր մակարդակով կրթական գործ կազմակերպելու համար: 1267 թ. ուսուցչապետ և պատմիչ Վարդան Արևելցին Խոր Վիրապի վարդապետական բարձրագույն դպրոցը տեղափոխում է Սաղմոսավանք⁴:

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, էջ 88-93:

³ Տե՛ս Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երևան, 2008, էջ 357:

⁴ Տե՛ս Տ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 180:

Այդպիսով, Սաղմոսավանքը դառնում է Վաչուտյան իշխանական տոհմի հոգևոր, մշակութային, կրթական, գրչական կենտրոնը, իսկ հարևանությամբ գտնվող ոչ պակաս հռչակավոր ու փառահեղ Հովհաննավանքը՝ 1243 թվականից Արագածոտնի, Ամբերդի, Նիգի, հետագայում մի պահ նաև Շիրակի եպիսկոպոսական առաջնորդանիստ վանքը:

Վաչե Ա Վաչուտյանի մակագրությամբ մեզ հասած Սաղմոսավանքի ձեռագրերի ցուցակից, որ հետագայում էլ ավելի է համալրվել նորանոր մատյաններով, հնարավոր է որոշակի պատկերացում կազմել տեղի վարդապետարանում դասավանդվող առարկաների, ուսումնասիրվող գիտությունների ու խորացվող մասնագիտությունների մասին. աստվածաբանություն, Հին ու Նոր կտակարանների մեկնություն, փիլիսոփայություն, տոմարագիտություն, կանոնագիտություն, տոնագիտություն, ծիսագիտություն, բարոյագիտություն, հայոց պատմություն, քերականություն, քարոզչություն ու քարոզի արվեստ, ճարտասանություն, ընդհանրական եկեղեցու հայրերի՝ Դիոնիսիոս Արիոպագացու, Հովհան Ոսկեբերանի, Եպիփան Կիպրացու, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Գրիգոր Նյուսացու, ինչպես նաև հայ դավանաբանական ու վարդապետական մտքի կարկառուն ներկայացուցիչներ, տիեզերական վարդապետ Գրիգոր Նարեկացու, Իգնատիոս Շնորհալու, Ներսես Շնորհալու, Մխիթար Գոշի և այլոց աշխատությունների ուսումնասիրություն, լատին ու բյուզանդական եկեղեցական առանձնահատկությունների իմացություն: Դպրոցում, դատելով մի շարք ձեռագրերի առկայությունից, կարևոր տեղ է հատկացվել քաղկեդոնականության, հերձվածների ու աղանդների դեմ պայքարին:

Սաղմոսավանքի վարդապետական դպրոցը գործել է ավելի քան 200 տարի, իսկ գրչության կենտրոնը, որի արմատները գալիս են XII դ. վերջերի Քարանձավի անապատից, գոյություն է ունեցել մինչև XVII դ. վերջերը՝ շուրջ 500 տարի: Սաղմոսավանքում հռչակվել են ուսուցչապետներ Հակոբ Ա (XIII դ. սկիզբ, եղել է Վարդան Արևելցու աշակերտը), Հակոբ Բ (XV դ. սկիզբ, եղել է Տաթևի համալսարանական, Հովհան Ռոտունեցու աշակերտը և Գրիգոր Տաթևացու աշակերտակից ընկերը), Կիրակոս Հռետորը (XV դ. վերջ) և ուրիշներ:

Սաղմոսավանքը միջնադարում հայտնի է եղել ոչ միայն իր վարդապետական բարձրագույն դպրոցով, գրչության կենտրոնով, այլև իր խրնկաբույր հարկերի ներքո պահվող քրիստոնեական սրբություններով:

Դրանց թիվը եղել է ինը: Եվ վերջապես, Սաղմոսավանքի առաջնորդ Սարգիս ճգնավոր եպիսկոպոս Արենցին հայոց վարդապետ Մովսես Տաթևացու խորհրդով (հետագայի կաթողիկոս՝ 1629-1632) XVII դ. սկզբին Հայաստանով մեկ սկսեց անապատական լուսավորչական շարժումը: Դրա նպատակն էր XVI դ. սկզբներից ի վեր Հայաստանի տարածքում ընթացող պարսկա-թուրքական պատերազմների պատճառով համատարած տգիտության պայմաններում մոռացված հին ու միջնադարյան գիտելիքների վեր հանումը և տարածումը, խաթարված գիտակրթական գործի վերսկսումը, որ դարեր ի վեր եղել է հայոց եկեղեցու գործունեության գերակա ուղղություններից մեկը: Այդ շարժման կազմակերպիչները քաջ գիտեին, որ հայ ժողովուրդը, սկսած V դարից, ամեն անգամ անբարենպաստ քաղաքական իրավիճակներում ազգապահպանության նպատակով զարկ է տվել գիտակրթական, մշակութային գործին:

Սաղմոսավանքը մոտավորապես XVI դ. վերականգնել է իր եպիսկոպոսական վիճակը: Նա XIII-XVIII դդ. ունեցել է 7-8 վանքապատկան և 22-23 հարկատու գյուղեր, հսկայական հողատարածքներ, այգիներ, տներ, ջրաղացներ, հնձաններ, ձիթհաններ և այլն: Դրանք մեծ շահույթներ են ապահովել վանքին, որի մի մասն օգտագործվել է գիտակրթական և բարեգործական նպատակներով:

XVII դ. 60-ական թվականների վերջերին Սաղմոսավանքի շինարար առաջնորդ Գաբրիել Կարբեցի վարդապետը (1656-1661, 1662-1674), ինչպես վերն ակնարկել ենք, հիմնովին վերանորոգել է ողջ համալիրը:

Սաղմոսավանքը Հայաստանի մյուս վանքերի նման մերթ ընդ մերթ թալանվել է օտար ասպատակիչների կողմից, բայց ամեն անգամ կարողացել է վերագտնել իրեն: Սաղմոսավանքն անշքացել է XIX դ. սկզբներին, երբ խախտվել են վանքի շինությունները: Պահպանված մասով նա ծառայել է որպես ծխական եկեղեցի: Երևի այդ ժամանակ էլ պատրաստվել է Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան մկրտարանը Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռի նախասրահում, որտեղ թաղված է նաև Սաղմոսավանքի նշանավոր առաջնորդ Հովհաննես Կարբեցի ճգնավոր եպիսկոպոսը (1638-1656):

XIX դ. վերջերին Սաղմոսավանքը նորոգվել է Խրիմյան Հայրիկի՝ Սկրտիչ I Վանեցի կաթողիկոսի (1892-1907) կողմից¹: Այդ ընթացքում են

¹ Տե՛ս Հ. Եղիազարյան, Սաղմոսավանք, էջ 40:

կառուցվել գավթի հարավային ու գրատան արևմտյան մուտքերի պորտիկները¹:

Խորհրդային տարիներին (1920-1991) Սաղմոսավանքը, բարեբախտաբար, շատ վանքերի ու եկեղեցիների նման կոլտնտեսության պահեստի չի վերածվել, այլ համարվել է որպես պատմաճարտարապետական հուշարձան և հանդիսացել Հայաստանի զբոսաշրջային այցելությունների դիտարժան վայրերից մեկը:

1991 թ. աստվածամերժողական համակարգի փլուզումից հետո, որքան էլ որ ծանր էր նորանկախ Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը, այնուհանդերձ ձգտումներն ազգային հոգևոր արժեքների հանդեպ այնքան ուժեղ էին, որ ակամայից ստիպում էին պատմական հուշարձանների նկատմամբ պատշաճ վերաբերմունքի դրսևորում և դրանց ծառայեցումն իրենց նպատակին:

Սաղմոսավանքի համար խիստ նպատակ եղավ Արագածոտնի թեմի կազմավորումը 1996 թվականին: 2009 թվից մինչև օրս Արագածոտնի թեմի առաջնորդն է Մկրտիչ եպիսկոպոս Պողոսյանը:

Սաղմոսավանքի համալիրը հիմնովին նորոգվել է 1998-2000 թթ.²:

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Ա. Գ. Մանուչարյան

Բանալի բառեր - ավանդություն, Սաղմոսավանք, վանք, հիմնադրել, համալիր, եկեղեցի, գավթ, գրատուն, կողմնապետ, աշխարհ, հոգևոր, դպրոց, քրիստոնեական, սրբություն:

Ըստ ավանդության Սաղմոսավանքը հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը 325/30 թվականին: Իսկ Սաղմոսավանքի վանական համալիրը, որը հիմնականում բաղկացած է Ս. Սիոն եկեղեցուց, գավթից, Ս. Աստվածածին եկեղեցի-գրատնից, կառուցել են Այրարատ աշխարհի կողմնապետներ, հայր և որդի Վաչե ու Քուրդ Վաչուտյանները 1215-1255 թթ.:

Սաղմոսավանքը միջնադարում հայտնի է եղել իր բարձրագույն հոգևոր դպրոցով (գործել է ավելի քան 200 տարի), հարուստ մատենադարանով, գրչության կենտրոնով (գոյություն է ունեցել մոտ 500 տարի) և քրիստոնեական սրբություններով:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

² Տե՛ս Գ.Գևորգյան, Մ. Հասրաթյան, Ա. Հախնազարյան, նշվ. աշխ., էջ 41:

ՏԱԳՄՈՍԱՎԱՆԿ ՆԱ ՍԱԿՐԵՍՏԻՔԱԿ ԻՍՏՈՐԻԱ

Աշոտ Մանուչարյան

Ключевые слова - *предание, Сагмосаванк, монастырь, основать, комплекс, церковь, притвор, книгохранилище, наместник, губерния, духовный, школа, христианский, святейшество.*

Согласно преданию монастырь Сагмосаванк основал Григорий Просветитель в 325/30г., а Сагмосаванкский монастырский комплекс, в который в основном входят церковь Св. Сион, притвор, церковь (с книгохранилищем) Св. Богородицы, построили наместники Айраратской губернии, отец и сын Ваче и Курд Вачутяны в 1215-1255 гг.

В средние века Сагмосаванк был известен своей высшей духовной школой (функционировала более 200 лет), богатым книгохранилищем, центром переписи древних рукописей (существовал около 500 лет) и христианскими святейшествами.

SAGHMOSAVANK AT THE CROSSROADS OF HISTORY

Ashot Manucharyan

Keywords: *legend, Saghmosavank, monastery, to found complex, church, gavit (naos), gratoon (scribery), world (province), spiritual, school, Christian, holy thing*

Due to the legend the Saghmosavank was founded by Grigor Loosavorich (Gregory the Enlightener) in 325/30. The main part of the monastic complex of Saghmosavank that consists of St. Sion church, gavit (naos) and St. Astvatsatsin (Theotocos) church-graon (special library where manuscripts were scribed) was built by Father and Son of Vache and Kurd Vachutyans, the princes of Ararat World (province) in 1215-1255.

In the Middle Ages Saghmosavank was known for its higher spiritual school that functioned more than 200 years, the rich library, scribe-centers, that existed nearly 500 years, and Christian holy things.